ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

Համայնքային աղքատության հաղթահարման փորձառություն/Community Poverty Reduction “Know How”
ԾՐԱԳԻՐ NEAR-TS/2020/421-104

ՀՈՒԼԻՍ 2021

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC)

«Համայնքային աղքատության հաղթահարման փորձառություն» ծրագիրն իրականացվում է Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC), Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ (CRRC), Եվրասիա համագործակցություն հիմնադրամ (EPF) և Հրանտ Մաթևոսյան հիմնադրամ կազմակերպությունների կողմից՝ համագործակցաբար, ԵՄ ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում բազմաչափ աղքատության մակարդակի կրճատմանը՝ քաղաքացիական հասարակության կարողությունների հզորացման և շահառուների տեղեկացվածության բարձրացման միջոցով, մեծացնելով մասնակցությունը համայնքային զարգացման ծրագրերին և աղքատամետ բարեփոխումների իրականացմանը:

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC) հանրային ծրագրերի և քաղաքականությունների մոնիտորինգին և վերլուծությանն ուղղված ոչ առևտրային նախաձեռնություն է: 2001 թվականից ի վեր Կենտրոնն իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնցում բավականին մեծ դեր են ստացել առանձին ոլորտների քաղաքականությունների, ծրագրերի և բյուջեների վերլուծությունները: Կարևորելով հանրային միջոցներով հանրության համար իրականացվող ծրագրերի նպատակայնությունը, հասցեականությունը, իրականացման արդյունավետությունը և հանրության գոհունակությունը՝ Կենտրոնը փորձում է պրոֆեսիոնալ ներդրում ունենալ քաղաքականությունների մշակման և քննարկման գործընթացներում:

Ծրագրի շրջանակներում Կենտրոնն իրականացնում է Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում իրականացվող հանրային քաղաքականությունների և իրականացվող ծրագրերի քարտեզագրման, ՔՀԿ-ների մոնիտորինգի և գնահատման կարողությունների բարելավման, քաղաքականությունների մշակման գործընթացում մասնակցության ընդլայնմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև իրականացվող քաղաքականությունների և առանձին բյուջետային ծրագրերի սոցիալական ազդեցության գնահատում:

«Բյուջետային քաղաքականությունների ամփոփագիր. Շիրակի մարզ» հրապարակումը վերլուծական-տեղեկատվական հաշվետվություն է, որում համառոտ կերպով ամփոփված է մարզի սոցիալ-տնտեսական պատկերը, բյուջեները նկարագրող տարբեր պաշտոնական և համայնքային աղբյուրներից ստացված տեղեկատվությունը: Այն ուղղված է հանրության լայն շրջանակին, ինչպես նաև մասնագիտական հանրույթին՝ նպատակ ունենալով հասանելի դարձնել տեղեկատվությունը և բարձրացնել իրազեկվածության մակարդակը, հիմքեր ստեղծել քաղաքականությունների վերլուծության, արդյունավետ երկխոսության և տեղեկացված քննարկումների համար:

Հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Զեկույցից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 3

ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 8

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵ 9

- ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 10
- ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ 15
- ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ 17
- ԱՐՏԱՔԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ 20

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ 25

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ 25

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 26

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Շիրակի մարզը տեղակայված է Հայաստանի հյուսիս-արևմուտքում՝ սահմանակցելով Թուրքիային և Վրաստանին: Մարզը զբաղեցնում է 2,680 կմ^2 կամ հանրապետության տարածքի 9 տոկոսը: Տարածքի 210.9 հազար հա-ն գյուղատնտեսական նշանակության հողեր են (ներառյալ 78.1 հազար հա վարելահողեր): Մարզն ունի 42 համայնքներ, որոնք ներառում են 3 քաղաքային և 127 գյուղական բնակավայրեր:

Բնակչություն. 2020 թվականի տարեսկզբի դրությամբ Շիրակի մարզի մշտական բնակչությունը կազմել է 231.4 հազար մարդ կամ ՀՀ բնակչության 7.8 տոկոսը: Մարզի բնակչության 58.6 տոկոսը բնակվում են քաղաքային բնակավայրերում, իսկ 41.4 տոկոսը՝ գյուղական: Ընդ որում, քաղաքային բնակչության մեծամասնությունը (82.9 տոկոս) կամ մարզի բնակչության գրեթե կեսը (48.6 տոկոս) կենտրոնացած է Գյումրի քաղաքում:

Գծապատկեր 1. Շիրակի մարզի բնակչության կառուցվածքն ըստ բնակավայրերի, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Համախառն թողարկում. 2018 թվականի տվյալներով[1] Շիրակի մարզի ՀՆԱ-ն կազմել է 273.7 մլրդ դրամ՝ ձևավորելով հանրապետական ՀՆԱ-ի 4.6 տոկոսը: Մարզի բնակչության մեկ շնչի հաշվով թողարկված արտադրանքի ծավալը կազմել է 1,168.2 հազար դրամ, ինչը զիջում է միջին հանրապետական ցուցանիշը ավելի քան 42 տոկոսով: Նկատենք, որ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշով Շիրակի մարզը զիջում է հանրապետության գրեթե բոլոր մարզերին, բացառությամբ Լոռիի, Տավուշի և Գեղարքունիքի:

Գծապատկեր 2. ՀՆԱ կառուցվածքն ըստ մարզերի, 2018թ., տոկոս



Գծապատկեր 3. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ըստ մարզերի, 2018թ., հազար դրամ



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

[1] 2019 թվականի տվյալները հասանելի կլինեն 2021 թվականի վերջին՝ ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021» հրապարակմամբ:

Տնտեսության առավել էական դերակատարում ունեցող ճյուղերն են գյուղատնտեսությունը և շինարարությունը, որոնց կշիռը 2019 թվականին հանրապետական ցուցանիշի համեմատ կազմել է համապատասխանաբար 10.4 տոկոս և 6.3 տոկոս:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կեսից ավելին՝ 63.6 տոկոսը բաժին է ընկնում անասնաբուծությանը, իսկ 36.4 տոկոսը՝ բուսաբուծությանը:

Արդյունաբերության ճյուղերից էական է մշակող արդյունաբերության դերը. արդյունաբերական արտադրանքի մոտ 90 տոկոսը բաժին է ընկնում մշակող արդյունաբերությանը: Վերջինիս հիմնական ուղղություններն են սննդամթերքի արտադրությունը՝ 86.2 տոկոս, խմիչքների արտադրությունը՝ 5.6 տոկոս, ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը՝ 3.6 տոկոս և հագուստի արտադրությունը՝ 3.0 տոկոս:

Գծապատկեր 4. Շիրակի մարզի տնտեսության հիմնական ճյուղերի կշիռը համապատասխան ճյուղերի ՀՀ համախառն արտադրանքի ծավալում, 2019թ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 5. Շիրակի մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ ճյուղերի, 2019թ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Զբաղվածություն. Մարզում զբաղվածության մակարդակը կազմում է 45.5 տոկոս, իսկ գործազրկության մակարդակը 18.0 տոկոս: Զբաղվածության մակարդակը զիջում է հանրապետական ցուցանիշը 3.4 տոկոսային կետով, իսկ գործազրկության մակարդակը մոտ է հանրապետական միջին մակարդակին:

Գծապատկեր 6. Զբաղվածության մակարդակն ըստ մարզերի, 2019թ., տոկոս



Գծապատկեր 7. Գործազրկության մակարդակն ըստ մարզերի, 2019թ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Բնակչության եկամուտներ և ծախսեր. ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտները 2019 թվականին կազմել են 46,096 դրամ, ինչը զիջում է միջին

հանրապետական ցուցանիշը 14,980 դրամով կամ 24.5 տոկոսով: Ընդ որում, դրամական եկամուտների կառուցվածքում մեծ է աշխատավարձի կշիռը (35.6 տոկոս), հաջորդում են գյուղմթերքի և կենդանիների վաճառքից եկամուտները (19.4 տոկոս) և թոշակները (16.9 տոկոս): ՀՀ-ից դուրս ապրող բարեկամներից ստացված դրամական տրանսֆերտները կազմում են SS մեկ շնչի հաշվով եկամուտների 12.9 տոկոսը:

Գծապատկեր 8. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտները, դրամ



Աղյուսակ 1. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների կառուցվածն ըստ եկամուտների աղբյուրների, Շիրակի մարզ

	2019	
	դրամ	տոկոս
Ընդամենը	**46,096**	**100.0**
Վարձու աշխատանք	16,408	35.6
Ինքնազբաղվածություն	4,335	9.4
Գյուղմթերքի և կենդանիների վաճառք	8,942	19.4
Թոշակներ	7,787	16.9
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացման նպաստներ	1,631	3.5
Այլ պետական նպաստներ և կրթաթոշակ	336	0.7
ՀՀ-ում ապրող բարեկամներից տրանսֆերտներ	664	1.4
ՀՀ-ից դուրս ապրող բարեկամներից տրանսֆերտներ	5,924	12.9
Այլ եկամուտներ	69	0.2

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ և ՏԶՀԿ հաշվարկներ

Միջին ամսական աշխատավարձի մակարդակն ամենացածրն է հանրապետությունում. կազմում է 110,876 դրամ՝ զիջելով հանրապետական միջին ցուցանիշը 39.3 տոկոսով կամ 71,797 դրամով:

Գծապատկեր 9. Միջին ամսական աշխատավարձի մակարդակն ըստ մարզերի, 2019թ., դրամ



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Ի տարբերություն եկամուտների, SS մեկ շնչի հաշվով սպառողական ծախսերը 2019 թվականին նախորդ տարվա նկատմամբ կրճատվել են 7.8 տոկոսով և կազմել 31,665 դրամ:

Գծապատկեր 10. Շիրակի մարզում SS մեկ շնչի հաշվով ամսական սպառողական ծախսերի դինամիկան 2015-2019թթ.



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ և ՏՋՀԿ հաշվարկներ

Աղքատություն. Մինչև 2019 թվականը Հայաստանի ամենաաղքատ մարզը Շիրակն էր: 2019-ին աղքատության մակարդակը[2] մարզում կազմել է 48.4 տոկոս, ըստ որի Շիրակն ամենաաղքատ 2-րդ մարզն է երկրում՝ Արագածոտնից հետո: Աղքատության մակարդակը Շիրակում գերազանցում է հանրապետական ցուցանիշը 22 տոկոսային կետով: Ծայրահեղ աղքատության մակարդակը մարզում 2019-ին նվազել է և կազմել է 1.7 տոկոս, որը դեռ 0.3 տոկոսային կետով բարձր է հանրապետական ցուցանիշից:

Գծապատկեր 11. Աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների դինամիկան Շիրակի մարզում և ՀՀ-ում, 2015-2019թթ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

2020 թվականի տարեվերջի դրությամբ ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ են ստացել մարզի SS-ների մոտ 23 տոկոսը կամ 14,509 SS: Մասնավորապես, ընտանեկան նպաստ են ստանում 10,161 SS, սոցիալական նպաստ՝ 3,589 SS և եռամսյակային հրատապ օգնություն՝ 759 SS: Նկատենք, որ ընտանեկան նպաստ

[2]2020 թվականին ՀՀ-ում աղքատության գնահատման համար կիրառվել է նոր մեթոդաբանություն («Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2020»՝ https://www.armstat.am/am/?nid=81&id=2323): Հետևաբար 2019-ի տվյալները լիովին համադրելի չեն նախորդ տարիների ցուցանիշների հետ:

ստացող ընտանիքների թվաքանակով Շիրակի մարզը գերազանցում է մյուս բոլոր մարզերին և Երևան քաղաքին:

Գծապատկեր 12. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող SS-ների բաշխումն ըստ մարզերի, 2020 թվականի տարեվերջի դրությամբ



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարությունը 2017 թվականին հաստատել է ՀՀ Շիրակի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը[3], որում սահմանվում են մարզի երկարաժամկետ զարգացման հեռանկարները և ուղղությունները:

Ըստ այդ ռազմավարության, Շիրակի մարզի զարգացման տեսլականն է՝ **լինել Հայաստանի Հանրապետության առաջատար մարզ, ունենալ մրցունակ տնտեսություն՝ ապահովելով համայնքներում կայուն սոցիալ-տնտեսական հնարավորություններ և զբաղվածության բարձր մակարդակ:**

Ռազավարությամբ սահմանվում են Շիրակի մարզի զարգացման հետևյալ ռազմավարական նպատակները, վերջնական արդյունքների թիրախային ցուցանիշները և զարգացման գերակա ուղղությունները:

Աղյուսակ 2. Շիրակի մարզի զարգացման ռազմավարական ուղղությունները և չափորոշիչները

ՆՊԱՏԱԿՆԵՐ	ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1. ***Շիրակի մարզի մրցունակության աճ և տնտեսության դիվերսիֆիկացում:*** 2. ***Շիրակի մարզի շարունակական, համապարփակ ու կայուն տնտեսական աճ և համաչափության բարձր մակարդակի ապահովում:*** 3. ***Մարզային զարգացման քաղաքականության իրականացման գործընթացում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացում ու մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավում:***	• ***2025 թվականին 2015-ի համեմատությամբ միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների, ոչ գյուղատնտեսական ֆորմալ աշխատատեղերի և ակտիվ կազմակերպությունների թվաքանակի առնվազն 10 տոկոսով աճ,*** • ***2025 թվականին մեկ շնչի հաշվով մարզային ՀՆԱ-ի գերազանցում հանրապետական մակարդակի 60 տոկոսը,*** • ***Մինչև 2025 թվականը մարզում աղքատության մակարդակի նվազեցում 10 տոկոսային կետով,*** • ***Մինչ 2025 թվականը մարզի համայնքների խոշորացում՝ 11-15 խոշորացված համայնքների ձևավորում՝ 2016-ի 79-ի փոխարեն:***	1. ***Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացում:*** 2. ***Գյուղատնտեսական տեխնոլոգիաների արդիականացում և գյուղական տարածքների զարգացում:*** 3. ***Փոքր և միջին արդյունաբերական կազմակերպությունների գործունեության խրախուսում և աջակցություն:*** 4. ***Զբոսաշրջության զարգացում:***

Աղբյուրը՝ՀՀ Շիրակի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարություն

Կարևորվում են նաև զարգացման այնպիսի հորիզոնական ուղղություններ, ինչպիսիք են՝ հավասարությունը և խտրականության բացառումը, շրջակա միջավայրի պահպանությունը և էներգաարդյունավետությունը, մրցակցության պաշտպանությունը:

[3] ՀՀ կառավարությա 2017 թվականի հուլիսի 6-ի N 29 արձանագրային որոշում:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵ

Շիրակի մարզի համայնքների բյուջեների ընդամենը ծախսերը 2020 թվականին կազմել են 8,503 մլն դրամ կամ ՀՀ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի 6.1 տոկոսը, իսկ եկամուտները՝ 9,741 մլն դրամ կամ ՀՀ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների 6.2 տոկոսը:

Աղյուսակ 3. Շիրակի մարզի համայնքային բյուջեների հիմնական ցուցանիշները, 2018-2021թթ.

	2018 Փաստ.	2019 Փաստ.	2020 Փաստ.	2021 Պլան.[4]
ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսեր, մլն դրամ	6,646	7,725	8,503	9,715
ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի աճ, տոկոս	-0.9	16.2	10.1	14.2
ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի կշիռը ՀՀ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերում, տոկոս	5.6	5.8	6.1	-
ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտներ, մլն դրամ	7,093	8,156	9,741	11,151
ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների աճ, տոկոս	5.7	15.0	19.4	14.5
ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների կշիռը ՀՀ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտներում, տոկոս	5.6	5.6	6.2	-

Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, ՀՀ Շիրակի մարզպետարան և ՏԶՀԿ հաշվարկներ

Շիրակի մարզում համայնքային ծախսերի մեկ շնչի հաշվով միջին ցուցանիշը 2020 թվականին նախորդ տարվա համեմատությամբ աճել է մոտ 11 տոկոսով՝ 33,118 դրամից հասնելով մինչև 36,753 դրամ մակարդակի: Համայնքային եկամուտների աճն ավելի մեծ է՝ մեկ շնչի հաշվով միջին ցուցանիշը 34,968 դրամից աճել է մինչև 42,104 դրամ կամ 20 տոկոս:

Գծապատկեր 13. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների ծախսերի ցուցանիշը, ՀՀ դրամ



Գծապատկեր 14. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների եկամուտների ցուցանիշը, ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, ՀՀ Շիրակի մարզպետարան, ՀՀ ՎԿ և ՏԶՀԿ հաշվարկներ

Շիրակի մարզում համայնքային եկամուտների նաև համայնքային ծախսերի մակարդակը ցածր է հանրապետական միջին մակարդակից: Մեկ բնակչի հաշվով համայնքային ծախսերի

[4]2021 թվականին վերաբերվող բյուջետային տվյալները ծրագրային են, իսկ նախորդ տարիների համար՝ փաստացի:

մակարդակով Շիրակի մարզն ավելի քան 21 տոկոսով զիջում է միջին հանրապետական ցուցանիշը: Եկամուտների դեպքում տարբերությունը կազմում է մոտ 20 տոկոս:

Գծապատկեր 15. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների ծախսերն ըստ մարզերի, ՀՀ դրամ



Գծապատկեր 16. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների եկամուտներն ըստ մարզերի, ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, ՀՀ ՎԿ և ՏԶՀԿ հաշվարկներ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Համայնքային բյուջետային եկամուտների կառուցվածքում գերակշռում են պաշտոնական դրամաշնորհները: 2020 թվականին պաշտոնական դրամաշնորհները կազմել են համայնքային եկամուտների 75.8 տոկոսը, կամ 7,384 մլն դրամ: Հարկային եկամուտների և տուրքերի կշիռը բյուջեի եկամուտներում կազմել է 15.9 տոկոս, կամ 1,548 մլն դրամ: Նկատենք, որ 2018 թվականի համեմատությամբ պաշտոնական դրամաշնորհների կշիռը համայնքային եկամուտներում աճել է 10.2 տոկոսային կետով, իսկ հարկային եկամուտների և տուրքերի դեպքում՝ նվազել է 3.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 17. Շիրակի մարզի համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների կառուցվածքը, 2018 և 2020թթ, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ Շիրակի մարզպետարան և ՏԶՀԿ հաշվարկներ

Համայնքային եկամուտների աճը հիմնականում ապահովվում է պաշտոնական դրամաշնորհների աճի հաշվին: Վերջիններս նախորդ երկու տարիների ընթացքում աճել են

միջինում տարեկան 26.3 տոկոսով: Հարկային եկամուտները և տուրքերը 2019 թվականի համեմատությամբ նվազել են 1.6 տոկոսով, իսկ 2018 թվականի նկատմամբ աճել են 11.6 տոկոսով:

Կանխատեսվում է, որ ընդամենը համայնքային եկամուտները 2021 թվականին կկազմեն 11,151 մլն դրամ՝ 2020 թվականի մակարդակը գերազանցելով 14.5 տոկոսով: Ընդ որում, կաճեն եկամուտների բոլոր բաղադրիչները:

Գծապատկեր 18. Շիրակի մարզի համայնքային ամփոփ բյուջեի եկամուտները, 2018-2021թթ., մլն դրամ



Աղբյուր՝ ՀՀ Շիրակի մարզպետարան և ՏԶՀԿ հաշվարկներ

ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ

Ուշագրավ է, 2018-2020թթ. ընթացքում հարկերի և տուրքերի կառուցվածքում նվազել են անշարժ գույքի հարկերը: Սա վերաբերում է թե՛ համայնքների վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար գույքահարկին, թե՛ հողի հարկին: Համայնքային բյուջեներ ուղղվող տեղական և պետական տուրքերը ևս նվազել են:

Ի տարբերություն անշարժ գույքի, փոխադրամիջոցների համար գանձվող գույքահարկից մուտքերն աճում են:

Գծապատկեր 19. ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի հարկերի և տուրքերի կառուցվածքը, 2018-2021թթ., տոկոս



Գծապատկեր 20. ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի հարկերի և տուրքերի դինամիկան, 2018-2021թթ., հազար դրամ



Աղբյուր՝ ՀՀ Շիրակի մարզպետարան և ՏԶՀԿ հաշվարկներ

Մեկ բնակչի հաշվով Շիրակի համայնքներում հավաքագրված անշարժ գույքի հարկի միջին տարեկան մակարդակը կազմում է 2,000 դրամ, իսկ փոխադրամիջոցների գույքահարկի մակարդակը՝ 3,000 դրամ:

Մեկ բնակչի հաշվով հավաքագրված անշարժ գույքի հարկերի ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Հայկասար համայնքում՝ 6.8 հազար դրամ: Համայնքների մոտ 60 տոկոսի դեպքում անշարժ գույքի հարկի մեկ շնչի հաշվով տարեկան մակարդակը չի գերազանցում 2,000 դրամը:

Հարկ է նշել, որ անշարժ գույքի հարկի ավելի քան 72 տոկոսը բաժին է ընկնում հողի հարկին և միայն 28 տոկոսն է կազմում շենքերի և շինությունների համար վճարվող հարկը: Ընդ որում, մարզի 9 համայնքներում շենքերի և շինությունների համար գույքահարկ ընդհանրապես չի հավաքագրվում՝ պայմանավորված համապատասխան անշարժ գույքի կադաստրային ցածր արժեքով[5]:

Փոխադրամիջոցների գույքահարկի դեպքում բաշխումն ունի հակառակ պատկերը: Համայնքների ավելի քան 57 տոկոսի մոտ մեկ շնչի հաշվով փոխադրամիջոցների գույքահարկի մակարդակը գերազանցում է 3,000 դրամը:

Գծապատկեր 21. Համայնքների բաշխումն ըստ մեկ բնակչի հաշվով գույքահարկի մակարդակի



1 բնակչի հաշվով	Համայնքների քանակ	Տոկոս ընդամենը համայնքներում
> 4 հազ. դրամ	1	2.4
3 – 4 հազ. դրամ	5	11.9
2-3 հազ. դրամ	11	26.2
1-2 հազ. դրամ	18	42.9
<=1 հազ. դրամ	7	16.7
Ընդամենը	**42**	**100.0**



> 4 հազ. դրամ	4	9.5
3 – 4 հազ. դրամ	20	47.6
2-3 հազ. դրամ	13	31.0
1-2 հազ. դրամ	4	9.5
<=1 հազ. դրամ	1	2.4
Ընդամենը	**42**	**100.0**

Աղբյուր՝ ՀՀ Շիրակի մարզպետարան և ՏՀՀԿ հաշվարկներ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Դրամաշնորհների կազմում գերակշիռ մասը՝ ավելի քան 99.9 տոկոսը կազմում են ներքին դրամաշնորհները, այսինքն՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիաները և սուբվենցիաները: Արտաքին դրամաշնորհների մակարդակը շատ փոքր է. 2020 թվականին կազմել է ընդամենը 1.3 մլն դրամ: Արտաքին դրամաշնորհ է ստացել միայն մեկ համայնք՝ Արփի համայնքը:

[5] «Գույքահարկի մասին» ՀՀ օրենք: Ուժը կորցրել է 2021 թվականի հունվարի 1-ին:

Ներքին դրամաշնորհների կառուցվածքում գերակշռում են դոտացիաները: Դոտացիաների միջին տարեկան աճը 2019-2020 թվականների ընթացքում կազմել է 654 մլն դրամ կամ 13.9 տոկոս: Չնայած դոտացիաների բացարձակ աճին, վերջիններիս կշիռը ներքին դրամաշնորհների կառուցվածքում նվազել է՝ 2018-ի 95.3 տոկոսի համեմատությամբ և 2020-ին կազմել՝ 77.6 տոկոս:

Դոտացիաները *համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցման (համահարթեցման) նպատակով, պետական բյուջեից տրամադրվող ամենամյա անհատույց հատկացումներ են՝ համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու, ինչպես նաև բոլոր համայնքներում նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու հնարավորություն ստեղծելու համար[6]: Պետական բյուջեից տրամադրվող դոտացիաները բաղկացած են 2 մասից: Առաջին մասով դոտացիաներ հատկացվում են այն համայնքներին, որոնց բնակչությունը չի գերազանցում 3500-ը՝ տվյալ տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով (բոլոր համայնքներին հավասարաչափ): Իսկ երկրորդ մասով դոտացիաներ տրամադրվում են ըստ համայնքների եկամտային կարողության և ծախսային կարիքի[7]:*

Համայնքներին տրամադրվող պետական սուբվենցիաների ծավալների աճի տեմպը գերազանցում է դոտացիաների աճի տեմպին և վերջին տարիներին կազմել է 174 տոկոս: 2020 թվականին սուբվենցիաների աճն ամենամեծն է. Շիրակի մարզի համայնքներին տրամադրվել է 1,653 մլն դրամ սուբվենցիա, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 2.7 անգամ:

Նկատենք սակայն, որ 2021 թվականի համար համայնքների սուբվենցիոն ֆինանսավորման պլանավորված մակարդակը զիջում է 2020-ի մակարդակը մոտ 25 տոկոսով:

2020 թվականին դոտացիաները կազմել են 5,732 մլն դրամ, որոնց աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 19 տոկոս, 2021-ին պլանավորվում է դոտացիաների 13 տոկոս աճ, կամ 6,498 մլն դրամ մակարդակ:

Գծապատկեր 22. Շիրակի մարզի համայնքային ամփոփ բյուջեի ներքին դրամաշնորհների կառուցվածքը



Աղբյուր՝ ՀՀ Շիրակի մարզպետարան և ՏԶՀԿ հաշվարկներ

Դոտացիաներ տրամադրվել են Շիրակի մարզի բոլոր 42 համայնքներին: Տրամադրված դոտացիաների միջին մեծությունը կազմել է 136.5 մլն դրամ: Համայնքներից 35-ի կամ 83 տոկոսի դեպքում տրամադրված դոտացիաները չեն գերազանցել 100 մլն դրամը: Միևնույն ժամանակ, Գյումրի քաղաքին տրամադրվել է 2,630 մլն դրամ դոտացիա, որը կազմում է մարզի համայնքներին տրված դոտացիաների ընդհանուր ծավալի 45.9 տոկոսը: Առանց

[6] «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, Հոդված 2:
[7] «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, Հոդված 5 – Հոդված 16:

Գյումրի քաղաքի համայնքներին տրամադրվող դոտացիաների միջին մեծությունը կազմել է 75.6 մլն դրամ:

Գծապատկեր 23. Դոտացիաների բաշխումն ըստ համայնքների[8], մլն դրամ, 2020թ.



Աղբյուր՝ ՀՀ Շիրակի մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

Պետական բյուջեից մարզի համայնքների մոտ 79 տոկոսին, կամ 33 համայնքի տրամադրվել են սուբվենցիաներ, ընդ որում՝ համայնքներից 32-ի դեպքում դրանք կապիտալ սուբվենցիաներ են: Տրամադրված կապիտալ սուբվենցիաների միջին մեծությունը կազմել է 50 մլն դրամ: Գյումրի քաղաքին տրամադրվել է 710.8 մլն դրամ կապիտալ սուբվենցիա, որը կազմում է մարզի համայնքներին տրված կապիտալ սուբվենցիաների ընդհանուր ծավալի 43 տոկոսը:

Սուբվենցիաները *համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ են[9]:*

Գծապատկեր 24. Կապիտալ սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների[7], մլն դրամ, 2020թ.



Աղբյուր՝ ՀՀ Շիրակի մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

Ընթացիկ սուբվենցիաներ տրամադրվել են մարզի 14 համայնքների՝ միջին մեծությունը կազմել է 0.6 մլն դրամ:

[8] Գյումրի քաղաքը ներկայացված չէ:
[9] ՀՀ կառավարության N1708-Ն որոշում «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին», 16.11.2006թ., մաս I.3:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

Շիրակի մարզի համայնքների ընդամենը ծախսերը 2020 թվականին նախորդ տարվա համեմատությամբ աճել են 10.1 տոկոսով: Ընդ որում, ծախսերի աճի 5.3 տոկոսային կետը բաժին է ընկնում Գյումրի քաղաքին:

Մարզի համայնքների ընդամենը ծախսերում Գյումրի քաղաքի ծախսերի կշիռը կազմում է 48.3 տոկոս, հաջորդում են Անի (7.9 տոկոս), Ախուրյան (6.4 տոկոս), Արթիկ (6.1 տոկոս), Մարմաշեն (4.8 տոկոս), Աշոցք (2.3 տոկոս) և Ազատան (2.1 տոկոս) համայնքները: Մյուս համայնքների կշիռը ընդամենը ծախսերում տատանվում է 0.1-ից 1.9 տոկոսի սահմաններում:

Գծապատկեր 25. ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի կառուցվածքն ըստ համայնքների, 2020 թվական, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ Շիրակի մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

Համայնքային ծախսերի ամենամեծ գործառական ուղղությունը «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններն» են, որին ուղղվում է մարզի համայնքների ծախսերի 31 (առանց Գյումրի քաղաքի՝ մոտ 45) տոկոսը: Հաջորդում են «Կրթություն», «Տնտեսական հարաբերություններ» և «Հանգիստ, մշակույթ, կրոն» ոլորտները, համապատասխանաբար՝ 16.8, 16.6 և 16.1 տոկոսներով: Գյումրի քաղաքի համապատասխան ծախսերի չդիտարկումը կրթության դեպքում հանգեցնում է ծախսերի կշռի աճի մինչև 19.1 տոկոս, իսկ հանգիստ, մշակույթ կրոն ուղղության դեպքում՝ կրճատման՝ մինչև 5.2 տոկոս մակարդակներ:

Գծապատկեր 26. ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսային ուղղությունների կշիռները ՇՄ համայնքային ամփոփ բյուջեում, 2018-2021թթ., տոկոս





Աղբյուր՝ ՀՀ Շիրակի մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

Տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերը գերազանցապես ուղղվում են տրանսպորտի ոլորտ: Սա վերաբերվում է թե՛ Գյումրի համայնքին, թե՛ մարզի մնացած համայնքներին:

Համայնքային ծախսերի 77.3 տոկոսը հանդիսանում են ընթացիկ բնույթի ծախսեր: Ընդ որում, Գյումրիում դրանք կազմում են 81.7, իսկ մյուս համայնքներում՝ 73.1 տոկոս: Այդ թվում աշխատավարձերին և հավելավճարներին է ուղղվում ծախսերի մոտ 27 տոկոսը: Գյումրիում այս ծախսերի մասնաբաժինը մարզի մյուս համայնքների համեմատությամբ ավելի փոքր է՝ 21.4 տոկոս:

Կապիտալ ծախսերի կշիռը ընդամենը ծախսերում կազմում է միջինում 27.3 տոկոս:

Աղյուսակ 4. ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգումը, 2020թ.

	Գյումրի		Ընդամենը առանց Գյումրի		Ընդամենը Շիրակի մարզ	
	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%
Ընդամենը ծախսեր	**4,110.8**	**100.0**	**4,392.5**	**100.0**	**8,503.3**	**100.0**
Ընթացիկ ծախսեր	3,359.4	81.7	3,211.1	73.1	6,570.4	77.3
Աշխատավարձ և հավելավճարներ	*878.4*	*21.4*	*1,409.7*	*32.1*	*2,288.0*	*26.9*
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	1,073.5	26.1	1,250.9	28.5	2,324.4	27.3
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	- 322.1	- 7.8	- 69.4	-1.6	- 391.5	- 4.6

Աղբյուր՝ ՀՀ Շիրակի մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ

Սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացման նպատակով 2019 և 2020 թվականների ընթացքում Շիրակի մարզի 33 համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերին պետական բյուջեից ուղղվել է ավելի քան 2.2 մլրդ դրամ համաֆինանսավորում[10]:

2019 և 2020 թվականների ընթացքում իրականացված սուբվենցիոն ծրագրերի կառուցվածքում գերակշռել են տնտեսական ենթակառուցվածների զարգացմանն ուղղված ծրագրերը, որոնց ուղղվող պետական ֆինանսավորումը (առանց համայնք-ների համաֆինանսավորման) կազմել է 1.8 մլրդ դրամ: Հաջորդում են սոցիալական և մշակութային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերը՝ 0.3 մլրդ դրամ պետական ֆինանսավորմամբ, և գյուղատնտեսական ծրագրերը՝ 0.1 մլրդ դրամ պետական ֆինանսավորմամբ:

Գծապատկեր 27. Սուբվենցիոն ծրագրերի բաշխումն ըստ ոլորտների, մլն դրամ



Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏԶՀԿ հաշվարկներ

Պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիաների մեծ մասը՝ 41.9 տոկոսն ուղղվել է Գյումրի համայնքում իրականացվող ծրագրերին: Հաջորդում են Մարմարաշեն (9.0 տոկոս), Անի (8.1 տոկոս) և Բայանդուր (7.1 տոկոս) համայնքները:

Գծապատկեր 28. Սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման բաշխումն ըստ համայնքների, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏԶՀԿ հաշվարկներ

Մարզի 13 համայնքներից յուրաքանչյուրում 2019 և 2020 թվականների ընթացքում իրակա-նացվել են 3 և ավելի թվով սուբվենցիոն ծրագրեր, ընդ որում՝ դրանցից 4-ում իրականացվել են 5 և ավելի թվով ծրագրեր: Այդ համայնքներն են՝ Գյումրին, Ախուրյանը, Անին և Մարմարաշենը: 2-ական ծրագիր իրականացրած համայնքները 12-ն են: 9 համայնքներ այս իմաստով շատ պասիվ են, և ընդհանրապես սուբվենցիոն ծրագրեր չեն իրականացրել (տե՛ս գծապատկեր 29):

[10] Պայմանավորված կոնկրետ ծրագրի ոլորտով, առանձնահատկությամբ, համայնքի աշխարհագրական դիրքով, ինչպես նաև տվյալ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա այդ ծրագրի ազդեցությամբ՝ պետական բյուջեից համաֆինանսավորվում է համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայիոն ծրագրերի ընդհանուր արժեքի 30-ից 70 տոկոսը:

Գծապատկեր 29. Համայնքների բաշխումն ըստ սուբվենցիոն ծրագրերի քանակի, 2019-2020թթ.



Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏՋՀԿ հաշվարկներ

Տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերի թվում գերակշռում են ներհամայնքային ճանապարհների կառուցմանը և նորոգմանն ուղղված ծրագրերը: Քննարկվող երկու տարիների ընթացքում 17 համայնքներում իրականացվել են ճանապարհների կառուցման կամ նորոգման աշխատանքներ, որոնց ուղղվել է 1,020.6 մլն դրամ:

Մեծ թիվ են կազմում նաև էներգախնայողության և էներգաարդյունավետությանն ուղղված ծրագրերը: 15 համայնքներում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում տեղադրվել են արևային ֆոտովոլտային կայաններ, որոնց ուղղվել է 157.8 մլն դրամ:

Թվով 7 համայնքներում իրականացվել են փողոցային լուսավորության համակարգերի կառուցման և նորոգմանն ուղղված ծրագրեր, որոնց ուղղվել է 89.2 մլն դրամ:

6 համայնքներում տարատեսակ մեքենասարքավորումների (մեծամասամբ կոմունալ ծառայության և աղբահանության կազմակերպման մեքենաներ) ձեռքբերմանն է ուղղվել 376.0 մլն դրամ՝ ներառյալ 1 համայնքում 10.4 մլն դրամ ուղղվել է գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների ձեռքբերմանը:

Գյուղատնտեսական նշանակության ծրագրերը հիմնականում ուղղված են ոռոգման համակարգերի բարելավումներին և հակակարկտային կայանների տեղադրմանը: Մարզի 4 համայնքներում ոռոգման համակարգի կառուցման և նորոգման ծրագրերին է ուղղվել 49.7 մլն դրամ, իսկ 6 համայնքներում իրականացվել են հակակարկտային կայանների ձեռքբերման ծրագրեր, որոնց ուղղվել է 56.6 մլն դրամ:

Սոցիալ-մշակութային նշանակության սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 3 համայնքներում կառուցվել, վերակառուցվել կամ նորոգվել են մանկապարտեզների շենքերը, իսկ 6 համայնքներում՝ հասարակական նշանակության տարբեր շենքեր, 2 համայնքում իրականացվել է այգիների և պուրակների բարեկարգում (առավել մանրամասն տե՛ս ստորև գծապատկերում):

Գծապատկեր 30. Պետական բյուջեից ՇՄ համայնքներին տրամադրված սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների և ուղղությունների, մլն դրամ, 2019-2020թթ.

	Ճանապարհների կառուցում/նորոգում	Մեքենաաարքավորումների ձեռքբերում	Մանկապարտեզների կառուցում/նորոգում	Հասարակական շենքերի (կառուցում/վերանորոգում	Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	Խմելու ջրամատակարարման, ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում	Շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում	Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	Հակակարկտային կայանների ձեռքբերում	Բնակավայրերի գազաֆիկացում	Այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում	**Ընդամենը, մլն դրամ**	**Ընդամենը, տոկոս**
Ազատան	52.1								18.2				70.3	3.2
Ախուրյան	72.0		12.2	13.4									97.6	4.4
Ամասիա							10.7			5.3			15.9	0.7
Անի	52.3	25.6					38.9		28.4	23.1			178.4	8.1
Անուշավան							9.8					4.3	14.1	0.6
Աշոցք	47.6	2.3		5.1			5.5						60.5	2.7
Առափի	26.5					15.4							41.9	1.9
Արևշատ				2.1			15.4						17.4	0.8
Արթիկ	23.2						16.8						40.0	1.8
Արփի						8.2							8.2	0.4
Բայանդուր				17.0	17.8						120.4		155.2	7.1
Գեղանիստ			3.9										3.9	0.2
Գետք	12.4				5.5		4.0						21.8	1.0
Գյումրի	594.5	271.3		28.3								28.9	922.9	41.9
Երազգավորս	30.8				18.2								49.0	2.2
Լեռնակերտ				4.9			3.3		7.0				15.2	0.7
Լուսակերտ	7.8				8.3								16.2	0.7
Հայկավան										3.2			3.2	0.1
Հառիճ	9.0												9.0	0.4
Հոռոմ	24.2								19.4				43.6	2.0
Ղարիբջանյան							8.5			3.0			11.5	0.5
Մարմաշեն		41.2	106.8	23.7			6.0	6.6		13.7			197.9	9.0
Մեծ Մանթաշ							10.0		4.8				14.8	0.7
Մեղրաշեն				27.7									27.7	1.3
Նոր Կյանք	21.7						6.0						27.8	1.3
Ոսկեհասկ		10.4											10.4	0.5
Պեմզաշեն	11.6								8.6				20.2	0.9
Սարալանջ							7.8		2.9				10.7	0.5
Սարապատ		25.3				10.4				8.4			44.0	2.0
Սարատակ	9.0												9.0	0.4
Սպանդարյան							6.2						6.2	0.3
Փանիկ	5.6			11.7			8.8						26.2	1.2
Փոքր Մանթաշ	10.1												10.1	0.5
Ընդամենը, մլն դրամ	1,020.6	376.0	122.9	133.8	49.7	34.0	157.8	6.6	89.2	56.6	120.4	33.2	2,200.8	-
Ընդամենը, տոկոս	46.4	17.1	5.6	6.1	2.3	1.5	7.2	0.3	4.1	2.6	5.5	1.5	-	100.0

Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏԶՀԿ հաշվարկներ

ԱՐՏԱՔԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Բացի համայնքներին տրամադրվող դոտացիաներից և սուբվենցիաներից, ինչպես նաև պետական բյուջեից հանրապետական մակարդակով իրականացվող բյուջետային ծրագրերից, ստորև առանձնացնում ենք մի շարք արտաքին օժանդակությամբ իրականացվող ծրագրեր[11], որոնք էական ազդեցություն ունեն Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից և ուղղված են մարզի առանձին հիմնախնդիրների լուծմանը:

- ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող **Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրի** շրջանակներում Շիրակի մարզի 4 խոշորացված համայնքներում իրականացվել են ներդրումներ համայնքային զարգացման սոցիալական, տնտեսական, սանիտարական և շրջակա միջավայրի պահպանության ենթակառուցվածքներում:

Ծրագիր/համայնք	Սարապատ	Ամասիա	Աշոցք	Արփի
Էներգախնայողություն (արևային կայանների կառուցում)	✓			
Հանրային ծառայությունների որակի բարձրացում (տեխնիկական վերազինում)			✓	✓
Գյուղատնտեսության աջակցություն (տեխնիկական վերազինում)	✓	✓	✓	✓
Համայնքային կարողությունների ձևավորում		✓		
Իրականացման կարգավիճակը	Ավարտական փուլում է	Ավարտական փուլում է	Իրականաց-ված է	Ավարտական փուլում է

- ԳԷՀ աջակցությամբ իրականացվող **Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն ծրագրի** հողերի կայուն կառավարման բաղադրիչի շրջանակներում Շիրակի մարզի 7 բնակավայրերում իրականացվել է ոռոգման և ջրամատակարարման համակարգերի բարելավում և կառուցվել է 1 սառնարանային տնտեսություն:

Բնակավայր	Ջրամատակարարման համակարգերի բարելավում, վերակառուցում	Ոռոգման ցանցի վերակառուցում	Սառնարանային տնտեսության կառուցում)
Ձիթհանքով	✓		
Գանձաքար	✓		
Սառնաղբյուր	✓		
Գուսանագյուղ	✓		
Ջաջուռ	✓		
Ջրառատ	✓		
Հոռոմ		✓	✓

[11] Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային և դրամաշնորհային բոլոր այն ծրագրերը, որոնք չեն իրականացվում պետական բյուջեի միջոցով, այս խմբում ներառված չեն:

- ՀԲ աջակցությամբ իրականացվող **Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի** շրջանակներում Շիրակի մարզում իրականացվել են համայնքների ջրագծերի, առողջապահության, կրթության, մշակույթի, հատուկ խնամքի և ենթակառուցվածքների ոլորտի վերականգնման և շինարարության աշխատանքներ:

	Միկրոծրագիր	Բնակավայր	Իրականացման կարգավիճակը
	Մանկապարտեզի վերակառուցում	Այգաբաց	Իրականացված է
		Անուշավան	Իրականացված է
		Արևիկ	Իրականացված է
		Գյումրի («Արևիկ» մանկապարտեզ)	Իրականացված է
		Գյումրի («Զանգակ» մանկապարտեզ)	Ընթացքում է
	Մանկապարտեզի կառուցում	Գյումրի («Նանուլիկ» մանկապարտեզ)	Իրականացված է
		Հոռոմ	Ընթացքում է
		Սպանդարյան	Իրականացված է
	Մանկապարտեզի հիմնանորոգում/վերանորոգում	Ոսկեհասկ	Իրականացված է
		Փանիկ	Ընթացքում է
	Դպրոցի կառուցում	Պեմզաշեն	Իրականացված է
		Վարդաքար	Իրականացված է
		Կրասար	Իրականացված է
	Դպրոցի վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում	Հայկաձոր	Իրականացված է
	Դպրոցի մարզադահլիճի վերակառուցում, կառուցում	Փանիկ	Իրականացված է
		Հառիճ	Իրականացված է
	Խմելու ջրի նոր ջրատարի կառուցում	Ջաջուռ	Իրականացված է
	Խմելու ջրի արտաքին համակարգի վերակառուցում	Լեռնակերտ	Իրականացված է
	Ոռոգման համակարգի վերանորոգում	Ամասիա	Ընթացքում է
	Հողմիկ, Գոգհովիտ, Թորոսգյուղ, Ցողամարգ բնակավայրերի ոռոգման ինքնահոս համակարգի կառուցում և վերանորոգում	Սարապատ	Ընթացքում է
	Կոմունալ ծառայությունների բարելավում և ներհամայնքային տրանսպորտային համակարգի ձևավորում	Անի	Իրականացված է
	Կոմունալ ծառայությունների, ներհամայնքային և միջհամայնքային հաղորդակցության՝ ճանապարհների բարեկարգում	Մարմաշեն	Իրականացված է
	Համայնքի տնտեսական միջավայրի բարելավում՝ տեխնիկական վերազինում և ծառայությունների բարելավում	Ախուրյան	Իրականացված է

- ՀԲ աջակցությամբ իրականացվող **Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի** ներքո 2009 թվականից ի վեր Շիրակի մարզում վերանորոգվել է 106.88 կմ երկարությամբ ճանապարհ:

Ճանապարհահատված	Երկարություն (կմ)
Մ1-Թավշուտ-Աղվորիկ-Արդենիս-Ջորակերտ-Ծաղկուտ-Գառնառիճ կմ0+000-կմ10+123	10.23
Հոռոմ-Նոր Կյանք-Փանիկ-Սպանդարյան-Գեղանիստ կմ0+000-կմ3+700	3.70
Հոռոմ-Նոր Կյանք-Փանիկ-Սպանդարյան-Գեղանիստ կմ3+700-կմ8+000	4.30
Հոռոմ-Նոր Կյանք-Փանիկ-Սպանդարյան-Գեղանիստ կմ9+400-կմ12+286	2.87
Մ1-Լեռնակերտ կմ4+600-կմ8+550	3.95
Գյումրի-Ողջի-Գյուլիբուլաղ-Արեգնադեմ կմ0+000-կմ4+700	4.70
Գյումրի-Ողջի-Գյուլիբուլաղ-Արեգնադեմ կմ4+700-կմ9+400	4.70
Գյումրի-Ողջի-Գյուլիբուլաղ-Արեգնադեմ կմ9+400-կմ14+200	4.80
Մ7-Ոսկեհասկ կմ0+000-կմ2+080	2.08
Գյումրի-Արևիկ-Այգաբաց կմ0+000-կմ4+800	4.80
Գյումրի-Արևիկ-Այգաբաց կմ4+800-կմ10+430	5.63
Ախուրյան-Կառնուտ կմ4+000-կմ8+000	4.00
Կառնուտ-Մուսաելյան(Բասեն) կմ8+000-կմ13+000	5.00
Մուսաելյան(Բասեն)-Ջրառատ կմ13+000կմ16+770	3.77
Ա/Ճ Գյումրի-Ախուրյան կմ0+000-կմ4+000 և Ա/Ճ Բասեն-Հովիտ կմ0+000-կմ1+520	5.52
Ա/Ճ Ղարիբջանյան-Ախուրիկ, կմ0+000-կմ2+582	2.58
Մարալիկ-Քարաբերդ-Ձիթհանքով, կմ0+000-կմ11+100	12.08
Հ32-Վահրամաբերդ-Հովունի-Մ1 (Վահրամաբերդ կմ0+000-կմ0+631, կմ0+000-կմ0+325, Հովունի կմ0+000-կմ5+044)	6.00
Մ1-Հայրենյանց-Տուֆաշեն-Հ83(Հայկասար) կմ0+000-կմ8+872, կմ0+000-կմ1+579	11.15
Տ-7-14-Շիրակ-Կամո կմ0+000-կմ4+627 (իջ.դպրոց 1-0,42+դպրոց 2-0,247+0,097)-(0,377-Մ7)	5.01

- ՀԲ աջակցությամբ իրականացվող **Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի** շրջանակներում Շիրակի մարզում կառուցվել են 40կմ ջրագծեր, 10 հովվի տնակ և փարախ, 1 անասնաբուժական սպասարկման կենտրոն, ինչպես նաև ներդրումներ են իրականացվել սննդամթերքի 6 գործարաններում՝ արժեշղթաներում տեղական արտադրողների և վերամշակողների կարողությունները բարձրացնելու նպատակով:

	Բնակավայր	Ջրարբիացման համակարգ միավոր	Խողովակաշարի երկարությունը մ	Հովվի տնակ միավոր	Փարախ	Իրականացման կարգավիճակը
I բաղադրիչ Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգեր	Թավշուտ	2	450	0	0	Իրականացված է
	Մեծ Սեպասար	2	6,000	1	1	Ընթացքում է
	Զույգաղբյուր	3	5,000	1	1	Ընթացքում է
	Հարթաշեն	3	6,000	1	1	Ընթացքում է
	Ղազանչի	2	4,500	1	1	Ընթացքում է
	Ամասիա	3	300	1	1	Իրականացված է
	Արեգնադեմ	1	172	1	1	Իրականացված է
	Ալվար	3	4,832	1	1	Իրականացված է
	Աղվորիկ	2	374	1	1	Իրականացված է
	Արթիկ	5	4,700	1	1	Իրականացված է
	Փոքր Մանթաշ	4	7,700	1	1	Իրականացված է

	Արժեշղթա	Հայտատու	Բնակավայր	Ծրագիր	Իրականացման կարգավիճակը
II բաղադրիչ Արժեշղթայի զարգացում	**Կաթ**	«Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ	Մուսաելյան	Պանրի արտադրման նոր ժամանակակից սարքավորումների ձեռքբերում	Իրականացված է
		«Իգիթ» ՍՊԸ	Ազատան	Հզորությունների վերազինում և կաթնամթերքի բիզնեսի ընդլայնում	Իրականացված է
		«Ամասիայի Գլխավորող Պանրագործարան» ՍՊԸ	Ամասիա	«Ռոկֆոր» պանրի ստեղծման արտադրամաս	Իրականացված է
		«Սլավիկ Չապանյան Ավետիքի» Ա/Ձ	Բերդաշեն	Զարգացնենք հայրենական արտադրությունը	Իրականացված է
		«Նան Կաթ» ՍՊԸ	Գյումրի	Պանրի արտադրության վերազինում, սննդի անվտանգության ISO 22000:2018 կառավարման համակարգի ներդրում, արտահանման կազմակերպում	Ընթացքում է
	Միս (ձուկ)	«Խայծ Իշխան» ՍՊԸ	Գյումրի	Խավիարի ծավալների ավելացում և արտահանում	Իրականացված է

	Համայնք	Ծրագիր	Իրականացման կարգավիճակը
III բաղադրիչ Պետական կառույցների կարողությունների հզորացում	**Փանիկ**	Անասնաբուժական սպասարկման կենտրոնի բացում	Իրականացված է

- ՀԲ աջակցությամբ իրականացվող **Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրով** ավարտվել են Գյումրի քաղաքի Կումայրի պատմական թաղամասի զարգացման ծրագրի առաջին փուլի աշխատանքները, որի շրջանակներում վերականգնվել են թաղամասի 6 փողոցներ՝ Շիրակի, Գայի, Վարպետաց, Ջիվանի, Աբովյան և Ղորղանյանց:

- ՎԶԵԲ աջակցությամբ իրականացվող **Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագրի** շրջանակներում 2020 թվականին ամբողջությամբ բարեկարգվել, հիմնանորոգվել, կահավորվել և արդիականացվել են Գյումրի քաղաքի 23 փողոց՝ իրենց հարակից մայթերով, հիմնանորոգվել են փողոցների անձրևաջրերի հեռացման համակարգերը, տեղադրվել են փողոցային լուսավորության համակարգեր:

- ԳԶՎԲ աջակցությամբ իրականացվող **Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարում ծրագրի** շրջանակներում նախատեսվում է վերականգնել և կառուցել Կապսի ջրամբարը ընդհանուր 25 մլն մ^3 ծավալով, որի դեպքում պատվարի բարձրությունը կլինի 55 մետր: 1-ին փուլի ընթացքում պատվարի հիմքը կկառուցվի այնպես, որ հետագայում, 2-րդ փուլի ընթացքում, հնարավոր լինի բարձրացնել այն՝ հասցնելով առավելագույն 60 մլն մ^3 ծավալի:

- ԱԶԲ և ԵՆԲ աջակցությամբ իրականացվող **Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի** Տրանշ 3-ի շրջանակներում իրականացվում են Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածների շինարարական աշխատանքները և Տրանշ 5-ի՝ Գյումրի շրջանցիկ - Գյումրի – Բավրա հատվածի վերակառուցման աշխատանքները:

- ԵՄ աջակցությամբ իրականացվող **Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի** շրջանակներում Շիրակի մարզում իրականացվում են տարածքային զարգացման 2 պիլոտային ծրագրեր.
    - ✓ Շիրակի մարզում տեխնոլոգիական զարգացման խթանում (իրականացնող՝ «Ինովացիոն կենտրոն» հիմնադրամ),
    - ✓ Ամասիայում բրդյա թելերի և կտորի արտադրություն (իրականացնող՝ Ամասիայի համայնքապետարան, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ):

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների կառուցվածն ըստ եկամուտների աղբյուրների, Շիրակի մարզ. 5
Աղյուսակ 2. Շիրակի մարզի զարգացման ռազմավարական ուղղությունները և չափորոշիչները 8
Աղյուսակ 3. Շիրակի մարզի համայնքային բյուջեների հիմնական ցուցանիշները, 2018-2021թթ. 9
Աղյուսակ 4. ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգումը, 2020թ. 16

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. Շիրակի մարզի բնակչության կառուցվածքն ըստ բնակավայրերի, տոկոս 3
Գծապատկեր 2. ՀՆԱ կառուցվածքն ըստ մարզերի, 2018թ., տոկոս 3
Գծապատկեր 3. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ըստ մարզերի, 2018թ., հազար դրամ 3
Գծապատկեր 4. Շիրակի մարզի տնտեսության հիմնական ճյուղերի կշիռը համապատասխան ճյուղերի ՀՀ համախառն արտադրանքի ծավալում, 2019թ., տոկոս 4
Գծապատկեր 5. Շիրակի մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ ճյուղերի, 2019թ., տոկոս 4
Գծապատկեր 6. Զբաղվածության մակարդակն ըստ մարզերի, 2019թ., տոկոս 4
Գծապատկեր 7. Գործազրկության մակարդակն ըստ մարզերի, 2019թ., տոկոս 4
Գծապատկեր 8. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտները, դրամ 5
Գծապատկեր 9. Միջին ամսական աշխատավարձի մակարդակն ըստ մարզերի, 2019թ., դրամ 5
Գծապատկեր 10. Շիրակի մարզում SS մեկ շնչի հաշվով ամսական սպառողական ծախսերի դինամիկան 2015-2019թթ. 6
Գծապատկեր 11. Աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների դինամիկան Շիրակի մարզում և ՀՀ-ում, 2015-2019թթ., տոկոս 6
Գծապատկեր 12. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող SS-ների բաշխումն ըստ մարզերի, 2020 թվականի տարեվերջի դրությամբ 7
Գծապատկեր 13. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների ծախսերի ցուցանիշը, ՀՀ դրամ 9
Գծապատկեր 14. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների եկամուտների ցուցանիշը, ՀՀ դրամ 9
Գծապատկեր 15. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների ծախսերն ըստ մարզերի, ՀՀ դրամ 10
Գծապատկեր 16. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների եկամուտներն ըստ մարզերի, ՀՀ դրամ 10
Գծապատկեր 17. Շիրակի մարզի համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների կառուցվածքը, 2018 և 2020թթ, տոկոս 10
Գծապատկեր 18. Շիրակի մարզի համայնքային ամփոփ բյուջեի եկամուտները, 2018-2021թթ., մլն դրամ 11
Գծապատկեր 19. ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի հարկերի և տուրքերի կառուցվածքը, 2018-2021թթ., տոկոս 11
Գծապատկեր 20. ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի հարկերի և տուրքերի դինամիկան, 2018-2021թթ., հազար դրամ 11
Գծապատկեր 21. Համայնքների բաշխումն ըստ մեկ բնակչի հաշվով գույքահարկի մակարդակի 12
Գծապատկեր 22. Շիրակի մարզի համայնքային ամփոփ բյուջեի ներքին դրամաշնորհների կառուցվածքը 13
Գծապատկեր 23. Դոտացիաների բաշխումն ըստ համայնքների, մլն դրամ, 2020թ. 14
Գծապատկեր 24. Կապիտալ սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների7, մլն դրամ, 2020թ. 14
Գծապատկեր 25. ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի կառուցվածքն ըստ համայնքների, 2020 թվական, տոկոս 15
Գծապատկեր 26. ՇՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսային ուղղությունների կշիռները ՇՄ համայնքային ամփոփ բյուջեում, 2018-2021թթ., տոկոս 15
Գծապատկեր 27. Սուբվենցիոն ծրագրերի բաշխումն ըստ ոլորտների, մլն դրամ 17
Գծապատկեր 28. Սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման բաշխումն ըստ համայնքների, տոկոս 17
Գծապատկեր 29. Համայնքների բաշխումն ըստ սուբվենցիոն ծրագրերի քանակի, 2019-2020թթ. 18
Գծապատկեր 30. Պետական բյուջեից ՇՄ համայնքներին տրամադրված սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների և ուղղությունների, մլն դրամ, 2019-2020թթ. 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
Ա/Ձ	Անհատ ձեռնարկատեր
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի միացյալ նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԳԶՎԲ	Գերմանիայի զարգացման վարկերի բանկ
ԳԷՀ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՄևԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՇՄ	Շիրակի մարզ
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏՏ	Տնային տնտեսություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կառույց
ՖՆ	Ֆինանսների նախարարություն